

ք.Եղեգնաձոր

30 մարտի 2023թ.

Վայոց ձորի մարզի վիրուսային, մասնավորապես՝ արտաընդերային ճանապարհով փոխանցվող հեպատիտների կանխարգելման հանձնաժողովի նիստից

Նիստի մասնակիցներ.

Հանձնաժողովի նախագահ՝

Կարապետյան Լիլիա՝ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետի տեղակալ:

Հանձնաժողովի անդամներ՝

Սարգսյան Հեղինե՝ հանձնաժողովի քարտուղար,

Ծերունյան Բյուրեղ՝ ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ ՊՈԱԿ Վայոց ձորի մասնաճյուղի բժիշկ համաճարակաբան, հանձնաժողովի անդամ,

Արշակյան Նելլի՝ ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ ՊՈԱԿ Վայոց ձորի մասնաճյուղի բժիշկ համաճարակաբան, հանձնաժողովի անդամ,

Հանիսյան Էմմա՝ «Վայքի ԲՄ» ՓԲԸ-ի ինֆեկցիոն բաժանմունքի վարիչ, հանձնաժողովի անդամ,

Նազարյան Խորեն՝ «Վայքի ԲՄ» ՓԲԸ-ի տնօրենի տեղակալ, հանձնաժողովի անդամ:

Հրավիրված անձինք՝

Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ՝ Վ.Ասլանյան,

ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ ՊՈԱԿ Վայոց ձորի մասնաճյուղի տնօրեն՝ Օ.Բարսեղյան,

«Մալիշկայի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Գ.Հարությունյան,

«Մալիշկայի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի ընտանեկան բժիշկ՝ Ա.Շահրամանյան:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. Արտաընդերային վիրուսային հեպատիտների 2022 թվականի համաճարակային իրավիճակը՝ առկա խնդիրները վեր հանել և դրանց լուծման ուղղությամբ առաջարկություններ ներկայացնել: /զեկուցող՝ Բ.Ծերունյան/

1. Ընթացիկ հարցեր և առաջարկություններ:
- 2 Հանձնաժողովի նիստի ամփոփում:

Լսեցին՝

1. Հանձնաժողովի նիստը ղեկավարեց Վայոց ձորի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի տեղակալ Լ.Կարապետյանը և ներկայացրեց օրակարգում ընդգրկված հարցերը:

Արտահայտվեցին՝

ՀՎԿԱԿ ՊՈԱԿ Վայոց ձորի մասնաճյուղի բժիշկ-համաճարակաբան Բ.Ծերունյանը ներկայացրեց արտաընդերային վիրուսային հեպատիտների 2022 թվականի համաճարակային իրավիճակը: Նիստի ընթացքում ընդգծվեց, որ վիրուսային հեպատիտներն առողջապահության գերակա խնդիր են և ունեն արտահայտված համաճարակային ներուժ, լայն տարածում և զգալի սոցիալ-տնտեսական բեռ:

Նշվեց, որ մարզում վերջին 6 տարվա ընթացքում առավելագույն դեպքերը հայտնաբերվել են 2019 թվականին՝ 18 դեպք: Հիվանդացության ցուցանիշների աճը (բացառությամբ 2020-2021 թթ.-ի) պայմանավորված է ՀՀ-ում հակաճնակիրների հայտնաբերման գործընթացի ներդրման հետ, իսկ 2020-2021 թթ.-ին ցուցանիշների փոփոխություն չի արձանագրվել կապված կորոնավիրուսային հիվանդության համաճարակի հետ:

Մահում վերջին 6 տարվա ընթացքում վիրուսային հեպատիտի ցուցանիշներն ըստ տարիների եղել են՝ 2017թ.-ին՝ 3 դեպք, 2018թ.-ին՝ 11 դեպք, 2019թ.-ին՝ 18 դեպք, 2020թ.-ին՝ 9 դեպք, 2021թ.-ին՝ 9 դեպք, 2022թ.-ին՝ 3 դեպք:

Ներկայացվեց հեպատիտների դեպ պատվաստումների ընթացակարգը:

Քննարկվող հարցերի շուրջ արտահայտվեցին <<Վայքի ԲՄ>> ՓԲԸ-ի տնօրենի տեղակալ Խ.Նազարյանը, ՀՎԿԱԿ ՊՈԱԿ Վայոց ձորի մարզային կենտրոնի բժիշկ-համաճարակաբան Բ.Ծերունյանը, Ն. Արշակյանը, <<Վայքի ԲՄ>> ՓԲԸ-ի ինֆեկցիոն բաժանմունքի վարիչ՝ Է.Հանիսյանը, <<Մալիշկայի ԱԱՊԿ>> ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Գ.Հարությունյանը:


Քննարկվեցին մարզում հեպատիտների հայտնաբերման և ախտորոշման, արտաընդերային հեպատիտների համաճարակաբանական հսկողության և կանխարգելման ոլորտներում առկա խնդիրները:


Առաջարկվեց հեպատիտների հայտնաբերման համար իրականացվող հետազոտությունները բժշկական կազմակերպություններում իրականացնել պետական պատվերի շրջանակներում, որպեսզի բնակչությանը հասանելի լինի հաճախակի հետազոտվելը՝(հեպատիտների դրական դեպքերը հայտնաբերվում են հիմնականում բժշկական որևէ միջամտության ընթացքում իրականացվող հետազոտման արդյունքում):

Քննարկման արդյունքում նիստը որոշեց.

1. Կարճ ժամկետում վերացնել բժշկական կազմակերպություններում առկա թերությունները և բացթողումները:
2. Շարունակել ակտիվ աշխատել ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ ՊՈԱԿ Վայոց ձորի մարզային մասնաճյուղի հետ:

3. Հանձնարարել բժշկական կազմակերպությունների տնօրեններին՝ շարուակել ցուցաբերել անհրաժեշտ վերաբերմունք ներհիվանդանոցային միջամտություններով պայմանավորված, ինչպես նաև արտաընդերային ճանապարհով փոխանցվող վարակների հայտնաբերման և հաղորդման նկատմամբ:
4. Առաջարկություն ներկայացնել ՀՀ Առողջապահության նախարարություն հեպատիտների հայտնաբերման համար իրականացվող հետազոտությունները բժշկական կազմակերպություններում իրականացնել պետական պատվերի շրջանակներում:

Հանձնաժողովի նախագահ՝  Լ. Կարապետյան

Հանձնաժողովի քարտուղար՝  Հ. Սարգսյան